ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 11/94-Հ

«28» 04 2023 թ. գ. Երևան

ՎԱՀԵ ՍԱՀԱԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալի (ծածկագիր՝ 31-Ղ2-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 27-ի եզրակացությունը և Վահե Հովհաննիսյանի դիմումը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 151-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 5-րդ և 14-րդ կետերով,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Վահե Սահակի Հովհաննիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալի (ծածկագիր՝ 31-Ղ2-1) պաշտոնին՝ տասներկու ամիս փորձաշրջանով:

2. Վահե Հովհաննիսյանի փորձաշրջանը համակարգող նշանակել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ Տաթևիկ Արսենի Սարուխանյանին:

3. Վահե Հովհաննիսյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ